ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆ. ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ + ՀԱՏՈՒԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՆ 1» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 18 մարտի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի հունվարի 9-ի N 7-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի հունվարի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2024 թվականի նոյեմբերի 12-ին՝ Հյուսիս-հարավ մայրուղու առանցքային մաս կազմող՝ Սյունիքի հարավային և լեռնային շրջանում Սիսիանի և Քաջարանի միջև նոր ուղեգծի կառուցման ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր1) օժանդակելու նպատակով:

Համաձայն Պայմանագրի 11.6–րդ հոդվածի՝ Պայմանագիրը Բանկի և Հայաստանի Հանրապետության միջև նախատեսված Վարկի տրամադրման հետ կապված ամբողջական համաձայնագիր է և փոխարինում է նույն հարցի վերաբերյալ ցանկացած բացահայտ կամ ենթադրյալ նախկին համաձայնագրի:

2. Պայմանագիրն ունի 6 հավելվածներ[2] և 1 առդիր՝ **Հավելված Ա.** «Ծրագրի

[1] Ծրագիրը նկարագրված է Պայմանագրի Ա.1 Հավելվածում:

[2] Պայմանագրի թե՛ հայերեն, թե՛ անգլերեն տեքստերի 12.4–րդ հոդվածում նշված է, որ Պայմանագրի Նախաբանները և Ա-Ե Հավելվածները կազմում են Պայմանագրի մաս: Այնուամենայնիվ Պայմանագիրն ունի ևս մեկ՝ Զ Հավելված:

մասնագրերը և հաշվետվություններ ներկայացնելը», **Հավելված Բ.** «Համապատասխան միջբանկային դրույքաչափերի սահմանումները», **Հավելված Գ**. «Հատկացման առաջարկի/ընդունման ձևանմուշը (Հոդվածներ 1.2.Բ և 1.2.Գ)», **Հավելված Դ.** «Տոկոսի դրույքաչափի վերանայումը և փոխարկումը», **Հավելված Ե.** «Վարկառուի կողմից տրամադրվելիք հավաստագրերը», **Հավելված Զ.** «ԿԶԵՖ+-ի Բացառման հայտարարություն ՀՆՊ1-ով սահմանված ինքնիշխան սուբյեկտների համար», **Առդիր Ի.** «Ստորագրող կողմի լիազորությունը»**:**

3. Պայմանագրի համաձայն՝ Բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 236.000.000.00 եվրոյի չափով (երկու հարյուր երեսունվեց միլիոն եվրո) վարկ (Վարկ)՝ Ծրագրի ֆինանսավորման համար:

Վարկը Բանկի կողմից հատկացնում է մինչև 20 (քսան) Տրանշով՝ եվրոյով, և յուրաքանչյուր Տրանշի գումարը կազմում է նվազագույնը 5.000.000 եվրո (հինգ միլիոն եվրո) կամ (եթե ավելի քիչ) Վարկի ամբողջ չօգտագործված մնացորդը:

Ծրագիրը կազմված է Հայաստանի Սյունիքի մարզում Սիսիանի և Քաջարանի միջև նոր 60 կմ երկարությամբ մեկ երթևեկելի մասի ճանապարհային հանգույցի կառուցումից: Ծրագրի իրականացման վայրը Հայաստանի Սյունիքի մարզն է՝ Սիսիան և Քաջարան համայնքների վարչական սահմաններում:

Ծրագիրը ներառում է երեք առանձին հատվածներ՝ Հատված 1. Հյուսիսային ճանապարհահատված Սիսիանից մինչև Շենաթաղ (մոտավորապես 27 կմ), Հատված 2. Բարգուշատի թունել (մոտավորապես 8.6 կմ). Հարակից և ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման ոչ ենթակա աշխատանքներ և Հատված 3. Հարավային ճանապարհահատված (մոտավորապես 24 կմ):

Իրականացման նպատակով Ծրագիրը բաժանվել է երեք լոտերի: Ծրագրի իրականացումը նախատեսվում է սկսել մինչև 2025 թվականի կեսերը, իսկ աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2031 թվականի կեսը՝ 60 ամիս իրականացման ժամկետով: Թերությունների մասին ծանուցման ժամկետի համար նախատեսվում է մեկ տարի:

Պայմանագիրը և դրանից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ

պայմանագրային պարտավորություն կարգավորվում են Լյուքսեմբուրգի օրենս-դրությամբ:

Պայմանագրով Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա մարտի 20-ը և սեպտեմբերի 20-ը՝ մինչև Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթիվը, եթե այդպիսիք կան, կամ Մարման ամսաթիվը՝ բացառությամբ, եթե որևէ այդպիսի օր Համապատասխան աշխատանքային օր չէ:

4. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. չհակասելով Պայմանագրի 5.2(ե) հոդվածին՝ ընդունել, որ Հայաստանի Հանրապետության կողմից նշված Հատկացման հաշվին կատարված վճարումները Պայմանագրով նախատեսված հատկացումներ են այնպես, ինչպես այն դեպքում, երբ դրանք կկատարվեին Հայաստանի Հանրապետության սեփական բանկային հաշվին, ընդ որում՝ յուրաքանչյուր Տրանշի համար սահմանել միայն մեկ Հատ-կացման հաշիվ (հոդված 1.2.Դ, պարբերություններ 2 և 3),

4.2. Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ Բանկին տրա-մադրել ապացույց, որ գնահատման վճարն ամբողջությամբ կատարվել է Պայ-մանագրի 1.8–րդ հոդվածի (Գնահատման վճար) համաձայն, տրամադրել ապա-ցույց, որ Հայաստանի Հանրապետության կողմից Պայմանագրի ստորագրումը պատշաճ կերպով լիազորված է, և որ Հայաստանի Հանրապետության անունից Պայմանագիրն ստորագրող անձը կամ անձինք պատշաճ կերպով լիազորված են դա անելու յուրաքանչյուր այդ անձի կամ անձանց ստորագրության նմուշով, ինչպես նաև հավաստիացնել, որ Պայմանագրի առնվազն 2 (երկու) բնօրինակ պատշաճ կերպով ստորագրված է բոլոր Կողմերի կողմից՝ տրամադրելով Լիազորված ստորագրող անձանց և հաշիվների ցանկը՝ նախքան Հայաստանի Հանրապե-տության կողմից Հատկացման առաջարկ պահանջելը՝ համաձայն Պայմանագրի 1.2.Բ հոդվածի (հոդված 1.4.Ա),

4.3. Պայմանագրի 1.2–րդ հոդվածով նախատեսված Ենթաձրագիր 1-ի համար առաջին Տրանշի հատկացման նպատակով Բանկին տրամադրել Պայմանագրի

1.4.Բ հոդվածով նախատեսված գրավոր փաստաթղթերը կամ ապացույցները՝ Բանկի կողմից իրեն բավարարող ձևով և բովանդակությամբ՝ Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5–րդ հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 6 (վեց) Աշխատանքային օր առաջ կամ մինչ այդ օրը (հոդված 1.4.Բ),

4.4. Պայմանագրի 1.2–րդ հոդվածով նախատեսված Ենթածրագիր 2-ի համար առաջին Տրանշի հատկացման նպատակով Բանկին տրամադրել Պայմանագրի 1.4.Գ հոդվածով նախատեսված գրավոր փաստաթղթերը կամ ապացույցները՝ Բանկի կողմից իրեն բավարարող ձևով և բովանդակությամբ՝ Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5–րդ հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 6 (վեց) Աշխատանքային օր առաջ կամ մինչ այդ օրը (հոդված 1.4.Գ),

4.5. Պայմանագրի 1.2–րդ հոդվածի համաձայն՝ Ենթածրագիր 2-ի յուրաքանչյուր Տրանշի հատկացման համար, բացառությամբ առաջին Տրանշի, Բանկի պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, Հատկացման պլանավորված ամսաթվից (իսկ 1.5–րդ հոդվածի համաձայն հետաձգման դեպքում՝ համապատասխանաբար Հատկացման պահանջվող հետաձգված ամսաթվից կամ Հատկացման համաձայնեցված հետաձգված ամսաթվից) 6 (վեց) աշխատանքային օր առաջ կամ մինչ այդ օրը Բանկին տրամադրել Պայմանագրի 1.4.Է(ա) հոդվածով նախատեսված փաստաթղթերը կամ ապացույցները (հոդված 1.4.Է),

4.6. վճարել Հետաձգման վճարը, եթե Ընդունված տրանշի հատկացումը հետաձգվում է Պայմանագրի 1.5.Ա(1) կամ 1.5.Ա(2) կետերի համաձայն (հոդված 1.5.Ա(3)),

4.7. եթե Բանկը կասեցնում է Ընդունված տրանշը Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի կամ Պարտավորությունների չկատարման դեպքի կամ այնպիսի դեպքի կամ հանգամանքի առկայության պարագայում, որը ժամանակի ընթացքում կամ Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որևէ որոշման

կայացման հետևանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում) Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք կամ Պարտավորությունների չկատարման դեպք է, ապա Բանկին վճարել այդ Ընդունված տրանշի գումարի վրա հաշվարկված Հետաձգման վճարը (հոդված 1.6.Գ(1)),

4.8. Վարկի արժույթով Բանկին վճարել չօգտագործման վճար, որը Վարկի օրական չօգտագործված և չչեղարկված մնացորդի վրա հաշվարկվում է այն ամսաթվից, որը կազմում է 48 (քառասունութ) ամիս՝ սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը՝ տարեկան 0.1% (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսադրույքով և չօգտագործման հաշվեգրված վճարը վճարել յուրաքանչյուր Վճարման ամսաթվին՝ մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը, և Վերջնական հասանելիության ամսաթվին, կամ եթե Վարկը Պայմանագրի 1.6–րդ հոդվածի համաձայն ամբողջությամբ չեղարկվել է մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը, ապա Պայմանագրի 1.9(բ) հոդվածի (i) կետում նշված վճարման ամսաթվին՝ չեղարկման ամսաթվից անմիջապես հետո, ընդ որում, եթե վճարման ենթակա չօգտագործման վճարի կատարման ամսաթիվը համապատասխան աշխատանքային օր չէ, ապա վճարումը կատարել, առկայության դեպքում, այդ ամսվա համապատասխան աշխատանքային օր հանդիսացող հաջորդ օրը, կամ այդպիսի օրվա բացակայության դեպքում՝ համապատասխան աշխատանքային օր հանդիսացող ամենամոտ նախորդ օրը, բոլոր դեպքերում՝ վճարման ենթակա չօգտագործման վճարի չափի համապատասխան ճշգրտմամբ (հոդվածներ 1.9(ա), 1.9(բ), 1.9(դ) և 1.9(ե)),

4.9. Պայմանագրի 1.5–րդ և 1.6–րդ հոդվածներով նախատեսված վճարման ենթակա գումարները վճարել եվրոյով՝ Հայաստանի Հանրապետության կողմից Բանկի պահանջն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կամ Բանկի պահանջով սահմանված ցանկացած ավելի երկար ժամկետում (հոդված 1.10),

4.10. յուրաքանչյուր Լողացող դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի դիմաց վճարել տոկոսներ Լողացող դրույքաչափով, յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով, Հատկացման առաջարկում նշված համապատասխան Վճարման ամսաթվերին, որոնք սկսվում են Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող

առաջին այդպիսի Վճարման ամսաթվին, իսկ եթե Հատկացման ամսաթվից մինչև առաջին Վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը 15 (տասնհինգ) օր է կամ ավելի քիչ, ապա այդ ժամանակահատվածում հաշվարկված տոկոսների վճարումը հետաձգվում է մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը (հոդված 3.1.Բ, պարբերություն 1),

4.11. Տրանշի տոկոսադրույքի բազայի վերանայման կամ փոխարկման տարբերակն իրացնելու դեպքում Տոկոսի վերանայումը/փոխարկումն ուժի մեջ մտնելու ամսաթվից (Դ Հավելվածում սահմանված ընթացակարգին համապատասխան) վճարել տոկոս՝ Պայմանագրի Դ Հավելվածում նախատեսված դրույթներին համապատասխան սահմանված դրույքաչափով (հոդված 3.1.Գ),

4.12. չհակասելով Պայմանագրի 10-րդ հոդվածին և բացառություն կատարելով Պայմանագրի 3.1–րդ հոդվածից՝ Բանկի պահանջին համապատասխան, Պայմանագրի համաձայն վճարման ենթակա որևէ գումար ժամանակին չվճարելու դեպքում, վճարել Պայմանագրի պայմանների համաձայն վճարման ամսաթվից մինչև փաստացի վճարման ամսաթիվը ժամկետանց ցանկացած գումարի վրա հաշվեգրված տոկոս՝ տարեկան դրույքաչափով, որը հավասար է. Լողացող դրույքաչափով տրանշների հետ կապված ժամկետանց վճարումների գումարների համար՝ կիրառելի Լողացող դրույքաչափ՝ գումարած 2% (200 բազիսային կետ), Ֆիքսված դրույքաչափով տրանշների հետ կապված ժամկետանց վճարումների գումարների համար՝ հետևյալներից առավել մեծը. կիրառելի Ֆիքսված դրույքաչափ՝ գումարած 2% (200 բազիսային կետ), կամ Համապատասխան միջբանկային դրույքաչափ (մեկ ամիս)՝ գումարած 2% (200 բազիսային կետ), ինչպես նաև Պայմանագրի 3.2–րդ հոդվածի «ա» և «բ» կետերում նախատեսված ժամկետանց վճարումների գումարներից բացի՝ այլ ժամկետանց վճարումների գումարների համար՝ Համապատասխան միջբանկային դրույքաչափ (մեկ ամիս)՝ գումարած 2% (200 բազիսային կետ) (հոդված 3.2, պարբերություն 1),

4.13. ոչ ուշ, քան մինչև Կանխավճարի մասին ծանուցման մեջ նշված վերջնաժամկետը (եթե առկա է), Կանխավճարի մասին ծանուցումն ընդունելու դեպքում կատարել կանխավճարը (հոդված 4.2.Գ, պարբերություն 2),

Կանխավճարի գումարի վճարման հետ միասին կատարել հաշվեգրված տոկոսի, Կանխավճարի գումարի դիմաց վճարման ենթակա Կանխավճարի փոխ-հատուցման վճարում, ինչպես նշված է Կանխավճարի մասին ծանուցման մեջ, և Պայմանագրի 4.2.Դ հոդվածով սահմանված վճարը, եթե առկա է (հոդված 4.2.Գ, պարբերություն 3),

4.14. եթե Բանկն իր հայեցողությամբ Կանխավճարի մասին հայտը բա-ցառության կարգով ընդունում է 30 (երեսուն) օրացուցային օրվանից պակաս օր առաջ արված նախնական ծանուցմամբ, ապա Բանկին վճարել 10.000.00 եվրոյի (տաս հազար եվրո) չափով վճար յուրաքանչյուր Տրանշի համար, որի մասով մասնակի կամ ամբողջական կանխավճար է պահանջվում՝ հաշվի առնելով նման կամավոր կանխավճարի հետ կապված Բանկի կրած վարչական ծախսերը (հոդ-ված 4.2.Դ),

4.15. Բանկին անհապաղ տեղեկացնել, եթե տեղի է ունեցել կամ հավանական է, որ տեղի կունենա Ծրագրի ծախսերի կրճատման դեպք, և Պայմանագրի 4.3.Ա(1)(ա) հոդվածով պահանջված գումարի վճարումը կատարել Բանկի կողմից նշված ամսաթվին, որը պահանջը ներկայացվելու ամսաթվից հետո՝ 30 (երեսուն) օրվանից պակաս չէ (հոդվածներ 4.3.Ա(1)(ա) և հոդված 4.3.Ա(1)(բ)),

4.16. Բանկի կողմից Պայմանագրի 4.3.Ա հոդվածի համաձայն պահանջված ցանկացած գումար Պայմանագրի համաձայն հաշվեգրված կամ վճարման ենթակա ցանկացած տոկոսի կամ այլ գումարի հետ միասին, այդ թվում՝ առանց սահմանափակման, Պայմանագրի 4.3.Գ հոդվածով վճարման ենթակա ցանկացած փոխհատուցում վճարել Բանկի կողմից իր պահանջի մասին ծանուցման մեջ նշված Կանխավճարի ամսաթվին (հոդված 4.3.Բ),

4.17. Պայմանագրում կամ Բանկի պահանջով այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ տոկոսագումարներից, փոխհատուցման և մայր գումարից բացի բոլոր մյուս գումարները վճարել Բանկի պահանջն ստացվելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում (հոդված 5.2(ա)),

4.18. Պայմանագրի համաձայն փոխառված բոլոր գումարներն օգտագործել Ծրագրի իրականացման համար և ապահովել, որ Հայաստանի Հանրապետությանը

հասանելի լինեն Նախաբանի «բ» կետում նշված այլ ֆինանսական միջոցները, և որ այդ ֆինանսական միջոցներն անհրաժեշտ չափով ծախսվեն Ծրագրի ֆինանսավորման համար (հոդված 6.1),

4.19. Ծրագրի համար սարքավորումներ ձեռք բերել, ծառայություններ ապահովել և աշխատանքներ պատվիրել Բանկին բավարարող՝ վերջինիս Գնումների ուղեցույցում նկարագրված քաղաքականությանը համապատասխանող ընդունելի գնումների ընթացակարգերի համաձայն, ինչպես նաև Հարավային ճանապարհահատվածին առնչվող գնումների գործընթացը Բանկի կողմից ՎԶԵԲ-ին պատվիրակելուն, իսկ Հյուսիսային ճանապարհահատվածին առնչվող գնումների գործընթացը Բանկի կողմից ԱԶԲ-ին պատվիրակելուն համապատասխան՝ Բանկի, ԱԶԲ-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված ընթացակարգային մեթոդաբանության դրույթների համաձայն (հոդված 6.4),

4.20. երաշխավորել և ապահովել, որ Օժանդակող մարմինն ապահովի սպասարկումը, Ծրագրի ակտիվները, ապահովագրությունը, իրավունքները և թույլտվությունները, Բնապահպանական և սոցիալական չափանիշները և հաստատումները, ինչպես նաև ԵՄ իրավունքը (հոդված 6.5),

4.21. բոլոր առումներով պահպանել և ապահովել, որ Օժանդակող մարմինը պահպանի այն բոլոր օրենքները, որոնք տարածվում են իր կամ Ծրագրի վրա, եթե դրանք չպահպանելն էականորեն կվնասի Հայաստանի Հանրապետության՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողությունը (հոդված 6.6),

4.22. Պայմանագրի վերաբերյալ տեղեկությունները (բացի Հայաստանի Հանրապետության՝ Պայմանագրի կառավարման մեջ ընդգրկված անձնակազմին վերաբերող կոնտակտային տեղեկություններից (Կոնտակտային տվյալներ)) Բանկին բացահայտելիս ապանձնավորել կամ որևէ այլ կերպ փոփոխել այդ տեղեկությունները (ըստ անհրաժեշտության), որպեսզի դրանք չպարունակեն որևէ տեղեկություն՝ կապված նույնականացված կամ նույնականացման ենթակա անձանց հետ (Անձնական տվյալներ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրով

կոնկրետ պահանջվում է, կամ Բանկը կոնկրետ գրավոր պահանջում է բացահայտել (հոդված 6.9(ա)),

4.23. Բանկին հավաստիացնել և երաշխավորել, որ Պայմանագիրը կազմում է Հայաստանի Հանրապետության իրավաբանորեն վավեր, պարտադիր և կատարման ենթակա պարտավորությունները, և Պայմանագրով սահմանված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացումը և ապահովումը, կատարումը և դրա դրույթների պահպանումը չեն հակասում և չեն հակադրվում, ինչպես նաև չեն հակասի և չեն հակադրվի ցանկացած կիրառելի օրենքի, կանոնադրության, կանոնի կամ կանոնակարգի կամ ցանկացած վճռի, որոշման կամ թույլտվության, որը տարածվում է Հայաստանի Հանրապետության վրա և իր համար պարտադիր ուժ ունեցող ցանկացած համաձայնագրի կամ այլ փաստաթղթի, որը ողջամտորեն կարելի է ակնկալել, որ էական բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողության վրա (հոդվածներ 6.10(բ) և 6.10(գ)),

4.24. Բանկին հավաստիացնել և երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետությունը ստացել է Պայմանագրի հետ և դրանով սահմանված իր պարտավորություններն օրինականորեն կատարելու համար անհրաժեշտ բոլոր Թույլտվությունները, և Ծրագիրն ու այդ բոլոր Թույլտվությունները լիակատար ուժի և գործողության մեջ են և ընդունելի են որպես ապացույց, և Պայմանագրով սահմանված վճարման Հայաստանի Հանրապետության պարտավորությունները դասակարգվում են ոչ պակաս, քան pari passu (հավասարապես) վճարման իրավունքի նկատմամբ՝ դրա պարտքային գործիքներից որևէ մեկով սահմանված բոլոր այլ ընթացիկ և հետագա չապահովված և անկախ պարտավորությունների հետ՝ բացառությամբ ընդհանուր առմամբ ընկերությունների նկատմամբ կիրառվող օրենքով պարտադիր նախընտրված պարտավորությունների (հոդվածներ 6.10(է) և 6.10(ը)),

4.25. Բանկին հավաստիացնել և երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետությունն ապահովում է համապատասխանություն Պայմանագրի 6.5(ե) հոդվածին և որքան տեղյակ է (պատշաճ և մանրամասն հարցում կատարելուց հետո),

Հայաստանի Հանրապետության կամ ցանկացած համապատասխան Փոխ-կապակցված անձի դեմ Ծրագրի առնչությամբ Բնապահպանական կամ սոցիալական հայց չի հարուցվել կամ չկա վտանգ, որ կհարուցվի և կատարում է Պայմանագրի 6-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության բոլոր պարտավորությունները, և որքան տեղյակ է, Հայաստանի Հանրապետության կողմից Ծրագրում ներդրված որևէ ֆինանսական միջոց ապօրինի ծագում չունի, ինչպես նաև ձեռք չի բերվել Փողերի լվացման հետևանքով կամ կապ չունի Ահաբեկչության ֆինանսավորման հետ, և ո՛չ Հայաստանի Հանրապետությունը, ո՛չ որևէ Համապատասխան անձ չի դրսևորել որևէ Արգելված վարքագիծ՝ կապված Ծրագրի կամ Պայմանագրով նախատեսված որևէ գործարքի հետ, կամ չի իրականացրել որևէ ապօրինի գործունեություն՝ կապված Ահաբեկչության ֆինանսավորման կամ Փողերի լվացման հետ (հոդվածներ 6.10(թ)-ից 6.10(ժբ)),

4.26. որևէ այլ ֆինանսական վարկատուի հետ ֆինանսավորման համաձայնագիր կնքելու դեպքում, որը ներառում է վարկանիշի կորստի մասին դրույթ կամ դրա ֆինանսական ցուցանիշի վերաբերյալ այլ այնպիսի դրույթ՝ ըստ կիրառելիության, որը Պայմանագրով նախատեսված չէ կամ ավելի բարենպաստ է համապատասխան ֆինանսական վարկատուի համար, քան Պայմանագրի որևէ համարժեք դրույթ՝ Բանկի համար, ապա Բանկին անհապաղ տեղեկացնել և Բանկին տրամադրել առավել բարենպաստ դրույթի օրինակ, ինչպես նաև Բանկի պահանջի դեպքում անհապաղ կնքել համաձայնագիր՝ Պայմանագրում փոփոխություն կատարելու համար, որպեսզի նախատեսվի համարժեք դրույթ՝ հօգուտ Բանկի (հոդված 7.3),

4.27. առանց հապաղման Բանկի հաստատմանը ներկայացնել Ծրագրի հետ կապված ցանկացած էական փոփոխություն՝ հաշվի առնելով նաև նախքան Պայմանագրի ստորագրումը Ծրագրի հետ կապված տեղեկությունների բացահայտումը Բանկին՝ ի թիվս այլնի, Ծրագրի գնի, նախագծման, պլանների, ժամանակացույցի կամ ծախսերի ծրագրի կամ ֆինանսավորման պլանի հետ և Բանկի կողմից պահանջի դեպքում տրամադրել Հայաստանի Հանրապետության ապահովագրողների մասով հավաստագիր, որով հաստատվում է Պայմանագրի 6.5–րդ

հոդվածի «գ» կետի պահանջների կատարումը, և տարեկան կտրվածքով՝ Ծրագրի մաս կազմող ապահովագրված գույքին առնչվող գործող քաղաքականությունների ցանկը՝ ընթացիկ պարգևավճարների վճարման հաստատման հետ միասին (հոդվածներ 8.1(բ) և 8.1(դ)),

4.28. Պայմանագրի 8.2–րդ հոդվածով սահմանված կարգով Բանկին տրամադրել և ապահովել, որ Օժանդակող մարմինը Բանկին տրամադրի Պայմանագրի 8.2–րդ հոդվածով սահմանված լրացուցիչ տեղեկությունները, ապացույցները և փաստաթղթերը (հոդված 8.2),

4.29. Փոխառության և (կամ) Ծրագրի մասով Արգելված վարքագծի վերաբերյալ հավաստի պնդումների, բողոքի կամ տեղեկությունների դեպքում Բանկի հետ բարեխղճորեն խորհրդակցել համապատասխան գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ, մասնավորապես, եթե ապացուցվում է, որ Երրորդ կողմը Փոխառության և (կամ) Ծրագրի մասով Արգելված վարքագիծ է դրսևորել, որի արդյունքում Փոխառությունն օգտագործվել է ոչ նպատակային (հոդված 8.3(դ)),

4.30. վճարել Պայմանագրի կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթի կատարումից կամ իրականացումից առաջացող և Փոխառության համար տրամադրված ցանկացած Ապահովման ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կատարման հետ կապված բոլոր հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմատուրքը և գրանցման վճարները, որքանով դա կիրառելի է, ինչպես նաև վճարել Պայմանագրով նախատեսված ամբողջ մայր գումարը, տոկոսները, փոխհատուցումներն ու օրենքով կամ պետական կամ այլ մարմինների հետ կնքված համաձայնագրով պահանջվող այլ գումարներ՝ առանց ազգային կամ տեղական ցանկացած տեսակի այլ վերադիր վճարումներից պահումների կամ նվազեցումների, և որևէ այդպիսի պահումներ կամ նվազեցումներ կատարելու պարտավորության դեպքում՝ Բանկին կատարվող վճարումը մեծացնել այնպես, որ պահումներից կամ նվազեցումներից հետո Բանկի կողմից ստացվող զուտ գումարը հավասար լինի վճարման ենթակա գումարին (հոդված 9.1),

4.31. Բանկին վճարել ցանկացած ծախս կամ ծախքեր, որոնք Բանկի համար առաջացել են, կամ որոնք Բանկը կրել է որևէ օրենքի կամ կանոնակարգի ընդունման կամ դրանում որևէ փոփոխություն կատարելու (կամ մեկնաբանման, դրա նորմերի կիրառման կամ դրա կիրառման) կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու հետևանքով, ինչի անհրաժեշտությունն առաջացել է Պայմանագիրն ստորագրելու ամսաթվից հետո, որի համաձայն կամ որի արդյունքում Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախսեր՝ Պայմանագրով նախատեսված ֆինանսավորումն ապահովելու կամ իր պարտա-կանությունները կատարելու համար, կամ որի համաձայն կամ որի արդյունքում՝ Պայմանագրով Բանկին հասանելիք ցանկացած գումար կամ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը Վարկ կամ Փոխառություն տրամադրելու արդյունքում առաջացած ֆինանսական եկամուտը նվազեցվում է կամ վերացվում (հոդված 9.3(ա)),

4.32. անմիջապես վճարել Չմարված փոխառության ամբողջ գումարը կամ դրա մի մասը (ինչպես պահանջում է Բանկը) հաշվեգրված տոկոսների և Պայմանագրով նախատեսված բոլոր այլ հաշվեգրված կամ չմարված գումարների հետ միասին՝ Բանկի կողմից Պայմանագրի 10.1.Ա և 10.1.Բ հոդվածների դրույթ-ների համաձայն ներկայացված գրավոր պահանջի դեպքում (հոդված 10.1),

4.33. Ֆիքսված դրույքաչափով որևէ տրանշի նկատմամբ Պայմանագրի 10.1–րդ հոդվածով սահմանված պահանջ ներկայացվելու դեպքում Բանկին վճարել պահանջված գումարը որպես կանխավճար վճարման ենթակա մայր գումարի ցանկացած չափի համար փոխհատուցման հետ միասին և նշված օրը (հոդված 10.3.Ա),

4.34. Լողացող դրույքաչափով որևէ տրանշի վերաբերյալ Պայմանագրի 10.1–րդ հոդվածով սահմանված պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջված գումարը տարեկան 0,19% (տասնինը բազիսային կետ) ընթացիկ արժեքին հավասար գումարի հետ միասին, որը հաշվարկվում և հաշվեգրվում է որպես կանխավճար վճարման ենթակա մայր գումարի վրա նույն ձևով, ինչպես որ տոկոսները հաշվարկված և հաշվեգրված կլինեին, եթե այդ գումարը Տրանշի

մարման համար կիրառելի ժամանակացույցի համաձայն մնար չմարված մինչև Տոկոսի վերանայման/փոխարկման օրը՝ առկայության դեպքում, կամ Մարման օրը (հոդված 10.3.Բ, պարբերություն 1),

4.35. հիմնականում հրաժարվել ամբողջ անձեռնմխելիությունից, որը Հայաստանի Հանրապետությունը կամ Հայաստանի Հանրապետության ակտիվ-ները կամ եկամուտներն այլ կերպ կարող են ունենալ ցանկացած իրավազորության ներքո, ներառյալ՝ դատարանի վճիռը կատարելու համար կամ գույքային հայցով իր ցանկացած ակտիվի և եկամուտի նկատմամբ արգելանք, կալանք դնելու կամ դրանց վաճառքի համար իր ակտիվների կամ եկամուտների նկատմամբ ցանկացած գործընթաց (հոդված 11.3(բ)),

4.36. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ Հավելված Ա.2-ի 3-րդ կետով նախատեսված տեղեկությունները Բանկին տրամադրել ամենաուշը մինչև Հավելված Ա.2.-ի 3-րդ կետում նշված վերջնաժամկետը (Հավելված Ա.2, կետ 3),

4.37. Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկի մասով Ֆիքսված դրույքաչափը կամ Սպրեդը պատշաճ կերպով գրավոր ընդունելու դեպքում Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին և դրանից հետո սահմանված Վճարման ամսաթվերին վճարել հաշվեգրված տոկոս (Հավելված Դ, կետ Բ, պարբերություն 1),

4.38. Տոկոսի վերանայման/փոխակերպման մասին հարցում չներկայացնելու կամ Տոկոսի վերանայման/փոխակերպման առաջարկը Տրանշի համար գրավոր չընդունելու, կամ Բանկի կողմից Պայմանագրի Դ Հավելվածի Ա կետի համաձայն պահանջված փոփոխությունը գործողության մեջ չդնելու դեպքում՝ առանց փոխ-հատուցման Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին Տրանշն ամբողջու-թյամբ հետ վճարել (Հավելված Դ, կետ Գ, պարբերություն 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանա-դրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 մարտի 2025 թվականի
ՍԴՈ-1771